Գլխավոր տեղեկություն	
Համար	N 189-L
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Base act (19.02.2022-till now)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Հրապարակվել է միասնական կայքում 18.02.2022
Ընդունող մարմին	ՀՀ վարչապետ
Ընդունման ամսաթիվ	17.02.2022
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	17.02.2022
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	19.02.2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 189-L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 472-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման, առաջնահերթությունների ցանկի կազմման և սահմանման կարգը, հանրային ներդրումային ծրագրերի գնահատման մեթոդաբանությունը, հանրային ներդրումային ծրագրի նախագծի մշակման և գնահատման օրինակելի ձևը հաստատելու մասին» N 472-Լ որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 34-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը.».

2) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 37-րդ կետի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Նիստերն իրավազոր են, եթե մասնակցում են ներդրումային կոմիտեի բոլոր անդամները՝ բացառությամբ 33-րդ կետով սահմանված դեպքի։».

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 38-րդ կետի 2-րդ նախադասության մեջ «հանձնաժողովի» բառը փոխարինել «ներդրումային կոմիտեի» բառերով.

4) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 38-րդ կետի 3-րդ նախադասության մեջ «նախագահող փոխվարչապետ» բառերը փոխարինել «նախագահողն» բառով։

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

17.02.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ